Վարազդատ Մկրտչյան

Ծնվել է 1949թ. Երևանում:
Միջնակարգ կրթություն ստացել է Երևանի Սունդուկյանի անվան 26 միջնակարգ դպրոցում:
1966-1968թթ. սովորել և ավարտել է Երևանի սննդի արդյունաբերության տեխնիկումը:
1968-1970թթ. ծառայել է բանակում:

1971-1975թթ. ընդունվել է աշխատանքի Անդրկովկասի երկաթգծի Երևանյան բաժանմունքում որպես բանվորական սպասարկման բաժնի առաքիչ:
1975-1983թ. տեղափոխման կարգով նշանակվել է նույն բանվորական սպասարկման բաժնի հասարակական թիվ 8 պահեստի մառանապետ:
1983-1989թթ. տեղափոխման կարգով նշանակվել է նույն պահեստի պահեստապետ:

1989-1997թթ. երկաթգծի երևանյան բաժանմունքի բանվորական սպասարկման բաժնի ապրանքի և առևտրային բազայի տնօրենն էր:
1990-1994թ. ընդունվել և ավարտել է Երևանի տնտեսահիրավագիտական համալսարանը:

1997-1998թթ. աշխատել է Նորք-Մարաշի թաղապետարանում որպես աշխատակազմի ղեկավար:
1998-2009թթ. ղեկավարել է Նորք-Մարաշ համայնքը:

2009 թվականի հոկտեմբերի 21-ին արժանացել է Երևանի պատվավոր քաղաքացի կոչմանը:

2009-2015թթ. աշխատել է որպես Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար: